

**ԹՈՔԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԿՑՎԱԾ
ԹՈՔԱԲՈՐԲԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳ ԻՆՏԵՆՍԻՎ
ԹԵՐԱՊԻԱՅԻ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Ընդհանուր դրույթներ

Թոքերի արհեստական օդափոխություն (ԹԱՕ) պահանջող հիվանդների մոտ 10% շրջանում զարգանում է թոքերի արհեստական օդափոխության հետ համակցված թոքաբորբ (ԹԱՕԹ) և այս ցուցանիշը չի փոխվել վերջին տասնամյակների ընթացքում: Հայաստանի հանրապետության բժշկական օգնություն իրականացնող հաստատությունների ինտենսիվ թերապիայի բաժանմունքներում (ԻԹԲ) համաձայն ոչ պաշտոնական վիճակագրությանը ԹԱՕԹ-ի հաճախականությունը կազմում է շուրջ 25%: Այս վարակները բացասական են ազդում պացիենտների բուժման կարևորագույն ելքերի վրա: ԹԱՕԹ-ի արդյունքում առաջացած բոլոր պատճառներից մահացությունը տատանվում է 20% - ից մինչև 50%, մինչդեռ ամբողջովին նրանով պայմանավորված մահացությունը՝ 13%: ԻԹԲ-ում կիրառվող հակաբիոտիկների գրեթե կեսն ուղղված է ԹԱՕԹ-ի բուժմանը: Այս ախտաբանությունը համակցված է ահռելի տնտեսական ծախսերի և հոսպիտալացման տևողության երկարացման հետ:

ԹԱՕԹ-ի կանխագելման բազմաթիվ առաջարկվող մարտավարությունների հիմքում ընկած է համալիր կամ փաթեթային (“bundles”) մոտեցման պահանջը: Հաշվի առնելով ԹԱՕԹ-ի տարածվածությունը, նրա հետևանքով առաջացող կյանքի և առողջության ռիսկերը, տնտեսական բեռը ինչպես նաև այս ախտաբանության կանխարգելվող բնույթը, Անէսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միությունը ձեռնարկեց սույն գործելակարգի մշակումը:

Գործելակարգի մշակման աշխատանքային խմբի անդամների անվանացուցակ

1. Մանգոյան Հ.Ն., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար: *Թղթակցական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Վարդանանց 18/1, հեռ՝ (+374) 10592100*

2. Մալխասյան Ի.Է. ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի վարիչ

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Աբովյան 68, (+374) 060621409

3. Ղազարյան Ա.Ա. ք.գ.թ., «Արմենիա» բժշկական կենտրոնի անզգայացման և վերակենդանացման ծառայության ղեկավար

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0078, Մարգարյան 6, հեռ՝ (+374) 10318159

4. Մուրադյան Ա.Ռ., «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի վարիչ

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0087, Տիգրադադայան 14, (+374) 10 474300

5. Օհանյան Զ. Ե., ք.գ.թ., «Էրեբունի» բժշկական կենտրոնի բժիշկ-համաճարակաբան

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0087, Տիգրադադայան 14, (+374) 10 471160

6. Անտոնյան Հ.Ռ. «Աստղիկ» բժշկական կենտրոնի անհետաձգելի բուժօգնության, անզգայացման և վերակենդանացման ծառայության ղեկավար

Թղթակցական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0032, Դանիել Վարուժան 28ա , հեռ՝ (+374) 95558468, (+374) 93065388

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու կարգավորողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են իրենց շահերի բախման բացակայության մասին: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել և ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Գործելակարգի մշակման հենքը

Սույն Գործելակարգը մշակվել է Հայաստանի անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների միության անդամների կողմից հետևյալ հիմնական գրականության աղբյուրների հիման վրա.

- Kalil AC, Metersky ML, Klompas M, Muscedere J, Sweeney DA, Palmer LB, Napolitano LM, O'Grady NP, Bartlett JG, Carratalà J, El Solh AA, Ewig S, Fey PD, File TM Jr, Restrepo MI, Roberts JA, Waterer GW, Cruse P, Knight SL, Brozek JL. Management of Adults With Hospital-acquired and Ventilator-associated Pneumonia: 2016 Clinical Practice Guidelines by the Infectious Diseases Society of America and the American Thoracic Society. Clin Infect Dis. 2016 Sep 1;63(5):e61-e111. doi: 10.1093/cid/ciw353. Epub 2016 Jul 14
- Guidelines for the prevention of ventilator-associated pneumonia in adults in Ireland SARI Working Group Health Protection Surveillance Centre February 2011
- Álvarez Lerma F, Sánchez García M, Lorente L, Gordo F, Añón JM, Álvarez J, Palomar M, García R, Arias S, Vázquez-Calatayud M, Jam R; Sociedad Española de Medicina Intensiva; Sociedad Española de Enfermería Intensiva Guidelines for the prevention of ventilator-associated pneumonia and their implementation. The Spanish "Zero-VAP" bundle. Med Intensiva. 2014 May;38(4):226-36. doi: 10.1016/j.medin.2013.12.007. Epub 2014 Mar 1.

Գործելակարգի պացիենտի մոդել

Սույն Գործելակարգի պացիենտի մոդելն է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հիմնարկների ԻԹԲ-ում ԹԱՕ պայմաններում գտնվող մեծահասակ պացիենտները (Այուսակ 1):

Այուսակ 1

ԹԱՕԹ-ով մեծահասակների պացիենտի մոդել

Մոդելի պարտադիր բաղադրիչ	Բաղադրիչի նկարագրությունը
Նոզոլոգիական ձևը	Թոքերի արհեստական օդափոխության հետ համակցված թոքաբորբ
Տարիքային կարգավիճակ	Մեծահասակներ
Հիվանդության աստիճանը	Ցանկացած
Հիվանդության փուլը	Ցանկացած

Բարդությունները	Անկախ բարդություններից
Կոդը ըստ ՀՄԴ-10	J 95.851
Բուժօգնության ցուցաբերման պայմանները	Հիվանդանոցային

Հապավումներ

ԻԹԲ՝ ինտենսիվ թերապիայի բաժանմունք

ԹԱՕ՝ թոքերի արհեստական օդափոխություն

ԹԱՕԹ՝ թոքերի արհեստական օդափոխություն հետ համակցված թոքաբորբ

PEEP (Positive End-expiratory Pressure)՝ դրական ճնշում արտաշնչման վերջում

Սահմանումներ

Համաձայն 2016թ. IDSA/ATS-ի ուղեցույցի ԹԱՕԹ-ը, դա **ներշնչափողային ինտուբացիայից ≥ 48 ժամ անց առաջացած կամ հարաճող թոքային ինֆլտրատներն են, որոնք ուղեկցվում են վարակի համակարգային նշաններով (տենդ, լեյկոցիտների քանակի փոփոխություններ), խորխի փոփոխություններով և պատճառաբանական հարուցիչի հայտնաբերումով:**

1. Ընդհանուր բնույթի միջոցառումներ

1.1 Մշակել և ներդնել ԹԱՕ պայմաններում գտնվող պացիենտների շրջանում վարակի հսկողության ներհիվանդանոցային կրթական ծրագրեր

1.2 Կիրառել ալկոհոլային հիմքով լուծույթների վրա հիմնված ձեռքերի մշակման քաղաքականություն ԻԹԲ-ի ողջ անձնակազմի համար

1.3 Նախապատվությունը տալ օրոտրախեալ ինտուբացիային այլ ոչ թե նազոտրախեալ տարբերակին

1.4 Նվազագույնի հասցնել ինտուբացիոն խողովակի ինքնակամ հեռացումները և կրկնակի չալանավորված ինտուբացիաների քանակը

1.5 Հնարավորինս լայն կիրառել թոքերի ոչ միջամտական շնչառական օգնության տարբերակները

1.6 Արտաշնչման վերջում դրական ճնշման (PEEP) ≥ 5 սմ H₂O շեմի կիրառում

1.7 Կանոնավոր կիրառել սեդացիայից դուրս բերման դրվագների մարտավարությունը

1.8 Կիրառել ԹԱՕ-ից դուրս բերման (weaning) ներհիվանդանոցային ընթացակարգեր

2. Ասպիրացիայի կանխարգելում

2.1 ԹԱՕ պայմաններում ապահովել ներշնչափողային խողովակի մանժետի բավարար ճնշում (≥ 20 սմ H₂O)

2.2 Շնչափողահատումով և պարզ գիտակցությամբ պացիենտների շրջանում ովքեր ունեն պահպանված կլման ակտ, հարկավոր է ապափքել մանժետը

2.3 ԹԱՕ ≥ 2 օր տևողության դեպքերում կատարել վերմանժետային տարածության արտաձծում

2.4 Պացիենտի շարունակական կիսանստած դիրքավորում՝ գլխատակը 30-45° բարձր

2.5 Որովայնի փքվածության կանխարգելում (տես՝ “Ինտենսիվ թերապիայի մեծահասակ պացիենտների էնտերալ սնուցման գործելակարգը”)

3. Սարքերի կոնտամինացիայի կանխարգելում

3.1 Միանվագ օգտագործման ծախսվող նյութերի և պարագաների (արտաձծման խողովակներ, ձեռնոցներ և այլ) կիրառում

3.2 Կրկնակի օգտագործվող ոչ միջամտական շնչառական սարքերը պետք է մշակվեն մանրէազերծ ջրով

3.3 Շնչառական շղթաների փոխարինում միայն արտաքին տեսանելի աղտոտվածության պարագայում և յուրաքանչյուր նոր պացիենտի համար նոր շղթայի տրամադրում

3.4 Շնչառական շղթաների ներսի կոնդենսատի կանոնավոր դրենավորում

3.5 Փակ արտաձծման հավաքածուները ցուցված են միայն շնչուղիների առատ արտադրությունով և օդակաթիլային վարակներով պացիենտների դեպքերում

3.6 Կատարել արտաձծման հավաքածուների փոխարինում միայն արտաքին տեսանելի աղտոտվածության պարագայում և յուրաքանչյուր նոր պացիենտին տրամադրել նոր հավաքածու:

4. Շնչառական և մարսողական ուղիների գաղութավորման կանխարգելում

- 4.1 Սթրես խոցերի կանխագելումը (<հստամինի 2 ընկալիչների արգելակիչներով կամ պրոտոնային պոմպի արգելակիչներով) ԹԱՕ տակ գտնվող պացիենտների շրջանում պետք է կատարվի միայն ստամոքս-աղիքային ուղու վերին հատվածներից արյունահոսության բարձր վտանգի դեպքում
- 4.2 Բերանի խոռոչի կանոնավոր մշակում քլորհեկսիդինի 0.12-2% լուծույթով (օրական 4 անգամ)
- 4.3 Ատամների մշակում փափուկ խոզանակով (օրական 2 անգամ)

5. ԹԱՕԹ-ի կանխարգելման փաթեթի ներդրում և մշտադիտարկում

- 5.1 Բոլոր ԹԱՕ իրականացնող ԻԹԲ-ում պետք է կիրառվի ԹԱՕԹ-ի կանխարգելման փաթեթը (տես՝ Հավելված 1.)
- 5.2 Կանոնավոր վերահսկել վերոնշյալ փաթեթի պատշաճ կիրառումը
- 5.3 Վերահսկել ԹԱՕԹ-ի հաճախականությունը և օգտագործել կլինիկական և կազմակերպչական որոշումներ ընդունելիս

8. Բժշկական ծառայությունների հիմնական և լրացուցիչ ցանկեր

8.1. Պահանջներ ախտորոշման, բուժման և խորհրդատվությունների նկատմամբ (հիմնական ցանկ)

Ծածկագիր	Անվանում	Տրամադրման հաճախականություն	Միջին քանակ	Ստորաբաժանում	Մասնագետ	Կատարման ժամկետներ
	Արյան ընդհանուր քննություն լեյկոֆորմուլայով	1	3	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Մեզի ընդհանուր քննություն	1	2	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության	1-7 օրեր

					բուժքույր/ բժիշկ	
	Արյան մեջ գլյուկոզայի մակարդակի որոշում	1	7	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշմա ն ծառայության բուժքույր/ բժիշկ	1-7 օրեր
	Արյան մեջ լակտատի մակարդակի որոշում	1	3	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշմա ն ծառայության բուժքույր/ բժիշկ	1-7 օրեր
	Արյան մեջ ալբումինի մակարդակի որոշում	1	2	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշմա ն ծառայության բուժքույր/ բժիշկ	1-7 օրեր
	ԱՍՏ/ԱԼՏ	1	2	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշմա ն ծառայության բուժքույր/ բժիշկ	1-7 օրեր
	Արյան մեջ բիլիրոբինի մակարդակի որոշում	1	2	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշմա ն ծառայության բուժքույր/ բժիշկ	1-7 օրեր
	Արյան մեջ միզանյութի մակարդակի որոշում	1	2	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշմա ն ծառայության բուժքույր/ բժիշկ	1-3 օրեր
	Արյան մեջ	1	2	Լաբորատոր	Լաբորատոր	1-7 օրեր

	կրեատինինի մակարդակի որոշում			ախտորոշման ծառայություն	ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	
	Արյան մեջ էլեկտրոլիտների (Na, K, Cl) մակարդակի որոշում	1	3	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Ակտիվացված մանակի թրոմբապլաստինի ժամանակի որոշում	1	3	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Արյան մեջ ֆիբրինոգենի մակարդակի որոշում	1	3	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Պրոտրոմբինային ժամանակի որոշում	1	3	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Միջազգային բնականոնացված հարաբերակցության որոշում	1	3	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Արյան մեջ պրոկալցիտոնինի մակարդակի որոշում	1	1	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության	1-7 օրեր

					բուժքույր/ Բժիշկ	
	Արյան գազերի և թթվահամային հավասարակշռության որոշում	1	10	Լաբորատոր օրոգրոշման ծառայություն	Լաբորատոր օրոգրոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Կլինիկոմանրէաբանական հետազոտություններ Մանրէաբանական ցանքեր (խորխ, արյուն, մեզ)	1	2	Լաբորատոր օրոգրոշման ծառայություն	Լաբորատոր օրոգրոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրեր
	Կրծքավանդակի ռենտգեն քննություն	1	2	Ճառագայթաբանական օրոգրոշման ծառայություն	Բժիշկ-ճառագայթաբան/տեխնիկ	1-7 օրերը
	Բազմաօրգանային ՀՇ քննություն	1	1	Ճառագայթաբանական օրոգրոշման ծառայություն	Բժիշկ-ճառագայթաբան/տեխնիկ	1-7 օրեր
	Որովայնի և փոքր կոնքի ԳՁՀ	1	2	Ճառագայթաբանական օրոգրոշման ծառայություն	Բժիշկ-ճառագայթաբան/տեխնիկ	1-7 օրեր
	Ուլտրաձայնային սրտագրություն	1	3	Ճառագայթաբանական օրոգրոշման ծառայություն	Բժիշկ-ճառագայթաբան/տեխնիկ	1-3 օրեր
	Չարկերակային ճնշման չափում	1	144	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապիայի բաժանմունքի բուժքույր	1-3 օրեր
	Սրտի կծկումների հաճախականության չափում	1	144	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապիայի բաժանմունքի բուժքույր	1-3 օրեր

	Պուլսօքսիմետրիա	1	144	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք ի բուժքույր	1-7 օրերը
	Ծայրամասային երակային կաթետրի տեղադրում	1	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք ի բուժքույր	1-7 օրերը
	Միզապարկի կաթետրավորում	1	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ	1-7 օրերը
	Շնչափողի ինտուբացիա	1	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ	1-7 օրերը
	Շնչափողի սանացիա	1	14	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ	1-7 օրերը
	Բրոնխոսկոպիա	1	2	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ/ էնդոսկոպիս տ	1-7 օրերը
	Կենտրոնական երակային կաթետրի տեղադրում	1	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ	1-7 օրերը
	Ինտենսիվ թերապևտի խորհրդատվու- թյուն	1	21	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ	1-7 օրերը
	Նեղ մասնագետի խորհրդատվու- թյուն	1	2	Այլ բաժանմունքներ	Ցանկացած նեղ մասնագետ	1-7 օրերը

8.2. Պահանջներ ախտորոշման, բուժման և խորհրդատվությունների նկատմամբ

(լրացուցիչ ցանկ)

Ծածկագիր	Անվանում	Տրամադրման հաճախակա- նություն	Միջին քանակ	Ստորաբաժանում	Մասնագետ	Կատարման ժամկետներ
----------	----------	-------------------------------------	----------------	---------------	----------	-----------------------

	Ստորին վերջույթների դուպլեքս քննություն	0.1	1	Ճառագայթաբանական ախտորոշման ծառայություն	Բժիշկ-ճառագայթաբան/տեխնիկ	1-7 օրերը
	Արյան մեջ էլեկտրոլիտների (Mg, Ca) մակարդակի որոշում	0.2	1	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրերը
	Արյան մեջ C-ռեակտիվ սպիտակուցի մակարդակի որոշում	0.2	1	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրերը
	Հերպես վիրուս-1/2 IgG հակամարմինների (HSV-1 IgG) որակական քննություն	0.1	1	Լաբորատոր ախտորոշման ծառայություն	Լաբորատոր ախտորոշման ծառայության բուժքույր/բժիշկ	1-7 օրերը
	Թոքերի արհեստական օդափոխություն	0.8	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ	1-7 օրերը
	Պլկրալ խոռոչի պունկցիա	0.1	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Թոքային վիրաբույժ	1-7 օրերը
	Պլկրալ խոռոչի դրենավորում	0.1	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Թոքային վիրաբույժ	1-7 օրերը
	Վերքերի վիրակապություններ	0.1	3	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Վիրաբույժ	1-7 օրերը
	Զարկերակային կաթետրի տեղադրում	0.1	1	Ինտենսիվ թերապիայի բաժանմունք	Ինտենսիվ թերապևտ	1-7 օրերը

9. Դեղերի հիմնական և լրացուցիչ ցանկեր

9.1. Պահանջներ դեղորայքային բուժման նկատմամբ (հիմնական ցանկ)

ԴԹԽ	ԱԹՔԴ	ՄՈԱ	Նշանակման հաճախա- կանություն	ԿՈԴ	ՀԿԴ	Մասնագետ	Կատարման ժամկետներ
Հակաբիոտիկներ՝ կարբապենեմ	J01DH02	Մերոպենեմ	1	1.5 գ	10.5 գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ կարբապենեմ	J01DH51	Իմիպենեմ/ ցիլաստատին	1	2.0 գ	14.0 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ Պենիցիլին	J01CR05	Պիպերացիլին/ տազոբակտամ	1	18.0 Գ	126.0 գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ ցեֆալոսպորին	J01DE01	Ցեֆեպիմ	1	4.0 գ	28.0 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակամակարոնիչներ՝ հեպարին	B01AB06	Ֆրաքսիպարին	1	0.3 մլ	0.9 մլ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Էլեկտրոլիտների լուծույթներ	B05CB01	0.9% NaCl	1	2.0 լ	14.0 լ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Էլեկտրոլիտների լուծույթներ	B05BB01	Ռինգերի լուծույթ	1	2.0 լ	14.0 լ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Էլեկտրոլիտների լուծույթներ	B05BB01	Հավասարակշռված ջրաաղային լուծույթ	1	2.0 լ	14.0 լ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Բժշկական գազեր	VO3AN01	Թթվածին	1	5.76 լ	40.32 լ	Ինտենսիվ թերապիայի բաժանմուն քի բուժքույր	1-7 օր

9.2. Պահանջներ դեղորայքային բուժման նկատմամբ (լրացուցիչ ցանկ)

ԴԹԽ	ԱԹՔ	ՄՈԱ	Նշանակման հաճախականություն	ԿՈԴ	ՀԿԴ	Մասնագետ	Կատարման ժամկետներ
Հակաբիոտիկներ՝ ցեֆալոսպորին	J01DD01	Ցեֆոտաքսիմ	0.1	8.0 գ	56.0 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ ցեֆալոսպորին	J01DD04	Ցեֆտրիաքսոն	0.1	4.0 գ	28.0 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ ցեֆալոսպորին	J01DD02	Ցեֆտազիդիմ	0.1	6.0 գ	42.0 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ ֆթորիսինոլոն	J01MA14	Մոքսիֆլոքսացին	0.1	0.4 գ	2.8 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ ֆթորիսինոլոն	J01MA12	Լևոֆլոքսացին	0.1	0.5 գ	3.5 գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ ամինոգլիկոզիդ	J01GB03	Գենտամիցին	0.1	0.24 գ	1.68 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ ամինոգլիկոզիդ	J01GB06	Ամիկացին	0.25	1.0 գ	7.0 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ գլիկոպեպտիդ	J01XA01	Վանկոմիցին	0.25	1.0 գ	7.0 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Հակաբիոտիկներ՝ իմիդազոլի	J01XD01	Մետրոնիդազոլ	0.25	1.5 գ	10.5 Գ	Ինտենսիվ թերապիայի	1-7 օր

աճանցյալ						մասնագետ/ բուժքույր	
Համակարգային օգտագործման հակասակայիններ	JO2AC01	Ֆյուկոնազոլ	0.25	0.4 գ	2.8 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ուղղակի ազդեցության հակավիրուսային դեղեր	JO5AB01	Ացիկլովիր	0.25	0.5 գ	3.5 Գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Պլազմայի փոխարինման միջոցներ	B05AA01	Ալբումինի 20% լուծույթ	0.5	200 մլ	600 Մլ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ալֆա- ադրենոմիմետիկներ	C01CA03	Նորէպինեֆրին	0.25	2.0 մգ	6.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Կարդիոտոնիկներ	C01CA07	Դոբութամին	0.25	1.8 մգ	3.6 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ադրենոմիմետիկներ	C01CA04	Դոպամին	0.25	1.8 մգ	3.6 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Քնաբեր միջոցներ	N05CD08	Միդազոլամ	0.25	15.0 մգ	105.0 Մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ալֆա- ադրենոմիմետիկներ	N05CM18	Դեքսմեդետոմիդին	0.25	400 մկգ	400 մկգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1 օր
Ընդհանուր անզգայացման ոչ ինհալացիոն միջոցներ	N01AX10	Պրոպոֆոլ	0.25	800 մգ	800 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1 օր

Ափիոնային անզգայացնող միջոցներ	N01AH01	Ֆենտանիլ	0.25	200 մկգ	1400 մկգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ցավազրկող թմրեցուցիչ միջոցներ	N02AA01	Մորֆին	0.25	10.0 մգ	30.0 Մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ափիոնային անզգայացնող միջոցներ	N02AX02	Տրամադոլ	0.25	200 մգ	600 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ցավազրկող ոչ թմրեցուցիչ միջոցներ	N02BE01	Պարացետամոլ	0.5	1.5 գ	6.0 գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ցավազրկող ոչ թմրեցուցիչ միջոցներ	N02BB02	Մետամիզոլ	0.5	1.0 գ	3.0 գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ոչ սթերոիդ հակաբորբոքային միջոցներ	M01AB05	Դիկլոֆենակ	0.25	75.0 մգ	150.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Ոչ սթերոիդ հակաբորբոքային միջոցներ	M01AB15	Կետորոլակ	0.25	30.0 մգ	60.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1-7 օր
Միորելակսանտներ	M03AC04	Ատրակուրիումի քեզիլատ	0.05	300 մգ	600 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	2 օր
Ալֆա- բետա ադրենոմիմետիկներ	C01CA24	Ադրենալին	0.05	9.0 մգ	9.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/ բուժքույր	1 օր
Հակաադիթմիկ միջոցներ	C01BD01	Ամիոդարոն	0.05	600 Մգ	600 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/	1 օր

						բուժքույր	
Մ-խոլինոարգելակիչներ	S01FA01	Ատրոպին	0.1	10.0 մգ	30.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1 օր
Կորտիկոսթերոիդներ	C05AA09	Դեքսամետազոն	0.05	16.0 մգ	48.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1 օր
Տեղային անզգայացողներ, հակաադիթամիկներ	C01BB01	Լիդոկաին	0.1	240.0 մգ	240.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1 օր
Հակաացիդեմիկ միջոցներ	B05CB04	Նատրիումի քիկարբոնատ	0.1	2.0 գ	2.0 գ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1 օր
Պրոտոնային պոմպի արգելակիչներ	A02BC01	Օմեպրազոլ	0.5	20.0 մգ	140.0 Մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1-7 օր
Պրոտոնային պոմպի արգելակիչներ	A02BC02	Պանտոպրազոլ	0.2	40.0 մգ	280.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1-7 օր
Դոֆամինային ընկալիչների կենտրոնական արգելակիչներ	A03FA01	Մետոկլոպրամիդ	0.1	40.0 մգ	40.0 մգ	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1-7 օր
		Էնտերալ սնուցում	0.2	750 կկալ/օրը	5250 կկալ/օրը	Ինտենսիվ թերապիայի մասնագետ/բուժքույր	1-7 օր

10. Պահանջներ աշխատանքի ռեժիմի, հանգստի, բուժման կամ վերականգնման նկատմամբ

Սույն Գործելակարգի համաձայն տվյալ պահանջների կատարումը պարտադիր չէ:

11. Պահանջներ սննդակարգի նշանակման և սահմանափակումների վերաբերյալ

Սույն Գործելակարգի համաձայն ցածր կալորիականությամբ (500-750 կկալ/օրը) էնտերալ սնուցումը առաջին ընտրության տարբերակն է: Վերջինիս անհնարինության պարագայում (օրինակ՝ ստամոքս-աղիքային ուղու անանցանելիության նշաններ) հարկավոր է քննարկել պարէնտերալ սնուցման տարբերակները:

12. Հիվանդի հոժարական տեղեկացված համաձայնության ստացման առանձնահատկությունները Գործելակարգը կատարելիս և հիվանդի, ինչպես նաև ընտանիքի անդամների լրացուցիչ տեղեկատվության տրամադրում

Հարկավոր է պացիենտի և/կամ նրա ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել ՄՇԴՀ-ի համալիր բուժման խնդիրները և հավանական ելքերը հնարավորինս շուտ և ոչ ուշ քան ախտորոշմանը հաջորդող 72 ժամերի ընթացքում:

13. Հիվանդի տվյալ մոդելի հնարավոր ելքերը

Հիվանդի տվյալ մոդելի հնարավոր ելքերի ցանկ

Ելքի անվանում	Ելքի զարգացման հաճախականություն	Ելքին հասնելու մոտավոր ժամկետ	Բժշկական օգնության ցուցաբերման հաջորդականություն
Ապաքինում ֆիզիոլոգիական գործընթացի կամ ներգրավված օրգանի ֆունկցիայի մասնակի վերականգնմամբ	35%	12 ամիս	Անցում համապատասխան վերականգողական ուղեցույցին/ գործելակարգին
Ապաքինում ֆիզիոլոգիական գործընթացի կամ ներգրավված օրգանի ֆունկցիայի ամբողջական կորստով	5%	3 ամիս	Անցում համապատասխան վերականգողական ուղեցույցին/ գործելակարգին
Յատրոգեն բարդությունների զարգացում	5%	Ցանկացած փուլին	Անցում համապատասխան ախտաբանության

			բուժման ուղեցույցին/ գործելակարգին
Մահացու ելք	Մինչև 55 %	Ներհիվանդանոցային փուլում	

Հավելված 1.

ԹԱՕԹ-ի կանխարգելման փաթեթի օրինակ*

1	Սեղացիան վերագնահատվում է և օրական ընդհատվում է
2	Պացիենտի ԹԱՕ-ից անջատման և էքստուբացիայի հնարավորությունները գնահատվում են յուրաքանչյուր օր
3	Շարունակական ապահովվում է գլխատակի բարձր դիրք՝ $\geq 30^\circ$
4	Բերանի խոռոչը մշակվում է քլորհեքսիդինի 0.12-2% լուծույթով օրական 4 անգամ
5	ԹԱՕ ≥ 2 օր տևողության դեպքերում կատարվում է վերմանժետային տարածության արտաձծում

*

*Ադապտացված է Շոտլանդիայի ինտենսիվ թերապիայի աուդիտի խմբի ԹԱՕԹ-ի կանխարգելման փաթեթից (Scottish Intensive Care Society Audit Group/NHS National Services Scotland VAP Prevention Bundle)